Պարոն/Տիկին Գ. Բաղրամյան *-ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն
Գ. Բաղրամյան ——
«30» 07 2024

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - ☐ Սերգեյ Աղինյան,
   - ☐ Հայկ Ղոսալմյան,
   - ☐ Դավիթ Մուրադյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ,
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Գերմանիա, Բեռլին, 2024 թվականի հուլիսի 25-26:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝**
   Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) նախաձեռնության «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակում կազմակերպված «Բաշխման ցանցերի օպերատորների նոր դերերը» թեմայով երկօրյա տարածաշրջանային դասընթաց: Դասընթացը պատկերացում տվեց էներգետիկ փոխակերպման շրջանակում բաշխման ցանցերի օպերատորների կողմից իրականացվող և իրականացվելիք քայլերի վերաբերյալ:

6. Քննարկվող թեմաները (հարցերը)՝

Բացման խոսքով հանդես եկան Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի, էներգետիկ համայնքի քարտուղարության և Գերմանիայի դաշնային կարգավորողի ներկայացուցիչները՝ նշելով էներգետիկ փոխակերպման համատեքստում բաշխման ցանցերի օպերատորների կարևոր դերակատարությունը:

Այնուհետև, ներկայացվեցին «Մաքուր էներգիայի փաթեթի» շրջանակում բաշխողների նոր դերերը, որտեղ հիմնական շեշտը դրվում է վերջիններիս աշխատանքի թվայնացման և ցանցերի ճիշտ կարգավորման վրա: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ճկուն և պահանջարկի վրա հիմնված կառավարմանը: Ներկայացվեցին փաթեթի շրջանակում ընդունված ԵՄ համապատասխան դիրեկտիվները, որոնցով կարգավորվում են էներգետիկ փոխակերպման հիմնադրույթները՝ անցում վերականգնվող էներգետիկային, ածխաջրածնային վառելիքներից հրաժարում և էներգախնայողություն: Ընդ որում, հարկ է նշել, որ էներգետիկ փոխակերպումը ենթադրելու է էլեկտրական ցանցերում լրացուցիչ թողունակության ապահովում, որին նվազագույն ծախսերով հնարավոր է հասնել միայն ցանցերի ճշգրիտ և ճկուն կարգավարման պարագայում:

Էներգետիկ կարգավորողների համագործակցության գործակալության (ACER) ներկայացուցիչը ներկայացրեց նոր իրողությունների պարագայում բաշխման ցանցի սակագների և ծառայությունների վճարների սահմանման մեթոդիկաները: Մասնավորապես, գործակալությունն առաջարկում է սակագներ սահմանելիս հստակ տարանջատել ծախսային հոդվածները, որդեգրել «կասկադային ծախսերի» մոդելը՝ այսինքն դրանք տարանջատել ըստ լարման մակարդակների, անցնել հզորության վճարների սահմանմանը, քննարկել ճկուն միացման պայմանագրերի սահմանման հնարավորությունը և այլն:

Դասընթացի առաջին օրը սահմանափակվեց էլեկտրաէներգիայի շուկայում ճկունության և պահանջարկի վերաբերյալ ԵՄ անդամ երկրներում կիրառվող փորձով: Մասնավորապես, ներկայացվեցին ճկուն կարգավորման դրական և

բացասական կողմերը, ցանցի թողունակության վրա դրանց ազդեցությունը և սպառողներին ու արտադրողներին առաջարկող փոխհատուցման մեխանիզմները:

Դասընթացի երկրորդ օրը նվիրված էր Արևելյան գործընկերության երկրներում բաշխողներին գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի ներկայացմանը, և բոլոր երկրները հանդես եկան ելույթներով՝ կրկին հիմնական շեշտը դնելով էներգետիկ փոխակերպման համատեքստում բաշխողների գործառույթներին:

7. Հանդիպումները, ելույթները՝

Դասընթացի երկրորդ օրը հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրեցին բաշխողի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործունեությունը կարգավորող իրավական ակտերով վերջինիս պարտավորությունները, սակագնի կառուցվածքը, ներդրումային ծրագիրը և սպասարկան որակի ցուցաններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև էներգետիկ փոխակերպման շրջանակում բաշխողի գործառույթները: Առանձին անդրադարձ կատարվեց նաև առաջիկա օրենսդրական բարեփոխումներին, որոնցով բաշխողի գործառույթները կմոտարկվեն ԵՄ համապատասխան դիրեկտիվներով սահմանված պահանջներին:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ընթացքում որոշումներ և փաստաթղթեր չեն ստորագրվել: Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.energy-community.org/events/2024/06/DSO_Berlin.html

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Առաջարկվեց պարբերաբար կազմակերպել նմանատիպ հանդիպումներ փորձի փոխանակման նպատակով:

Գործուղվող՝ Սերգեյ Աղինյան _____

(ստորագրություն)

Գործուղվող՝ Հայկ Ղոսալմյան _____

(ստորագրություն)

Գործուղվող՝ Դավիթ Մուրադյան _____

(ստորագրություն)

30.07.2024

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը
Հրաման 578-ՀՆ, Հրաման 579-ԳՔ, 08.07.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ՝ **Հայկ Ղոսալմյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բեռլին / Գերմանիա /**

5. Գործուղման ժամկետները

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սերգեյ Աղինյան	Հայկ Ղոսալմյան	Դավիթ Մուրադյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	114	114	114	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	47,869	47,869	47,869	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	191,474	191,474	191,474	574.422
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		191.474	191.474	191.474	574.422

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 29.07.2024թ.